

# ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՒՂԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Նարունակութիւն)

IV.

Հոգեկան տանջանք է և «Եսի» սահմանափակում.

Յովհ. Թումանեանի գեղեցիկը—այդ բառի այն ըմբռնումով, ինչպէս բացադրեցինք վերեւ—հալրենի եզերքն է. իրրեւ տաղանդ նա մտածելի է միայն այդանդ, ուրիշ սահմաններում նա անյաջողակ է որպէս բանաստեղծ։

Մենք արդէն նկատել ենք, որ նրա մենութեան երգերը բռնազրօսիկ են, ներչնչումով աղքատ, խակ կատարումով թոյլ, թայց և այնպէս մեր բանաստեղծի հոգեբանական դէմքը լաւ բնորոշելու համար նրանք արժէքաւոր են։ Խոր հայրենի եզերքի ներբողները հասկանալի են միայն և եթ մենութեան նւազների վերլուծումից յետոյ։ Յովհ. Թումանեանը կատարել է մի երկար տանջալից ճամբոր գուրթիւն հայրենի եզերքին հասնելու համար։ Եւ դրա պատճառն այն է, որ նա շրջապատւած է մեշշանական անհամակրելի միջաւվայրով։ Վերջինս ցաւագինորէն է ազգել նրա վրայ՝ պոկելով նրա սրտից դժգոհութեան, ցասումի մրմունջներ։ Նա տրանջում է, որովհետեւ հոգեպէս մաշտում և ծիւրում է խորթ շրջապատում։ Նա այդպիսով տանջւում է ներքուսա, նրա սիրաը տակն ու վրայ է լինում. ու փնտրում է խաղաղ հանդրւան, ապաքինման, հոգեկան կենսախինդի ապաստանարան։ Վերջապէս, գտնում է և խանդավառութեամբ պաշտամունքի առարկայ դարձնում նրան։

Նրա «Եսն» ևս սահմանափակուած է մեշշանական միջավայրում՝ ժխտելով ամենատեսակ ընդգրկումի հնարաւորութիւնու Ռում պիտի ընդգրկի, երբ ամեն ինչ ատելի է, օտար և մերժելի, երբ բոլոր արժէքները միայն զարթեցնում են ցաւի. կոկծի և կորսաի զզացումներ։ Ցաւ և կոկծի, որովհետեւ նա չի կարողանում ոչ մէկին համազգալ, մեշշանական հոգիները չունին արձագանք մեր բանաս-

տեղծի հոգու մէջ կորուսա, որովհետեւ նա ներքնատեսութեամբ զգումէ հայրենի եղերքի անցումը դէպի անդառնալինու իւր հայրենի եղերքի մրցակիցն է մեշչանական հասարակարգը, որ հիմնում է իւր հոյակապ չենքերը նահապետական աշխարհի փլատակների վրայ:

Այդ երկու աշխարհների դուգադրումից է ծագում Յովին Թումանեանի հոգեկան տանջանքը և «Եսի» սահմանափակումն այն չափով, ինչ չափով նա իւր հայեացքն ուղղում է չեչտօրէն մեշչանական արժէքների վրայ և այդ բալորը դուրս մղում իւր ներքին աշխարհից:

Իւր ուսանաւորներից մէկի խորագիրը բանաստեղծը դրեւ է՝ «Իմ երգը»:

Հետաքրքրական է այժմ տեսնել, թէ որքան ճիշտ է այդ յորշորջումը, Արգեգք այդ երգը ներքին բռվանդակութեամբ համապատասխանում է բանաստեղծի գեղեցկին, նրա տաղանդի կենտրոնական և ընորոշ ապրումներին Հայրենի եղերքի սահմաններում նա իրեն զգում է հոգու անդորրուն, խաղաղ և զւարթ վիճակում. Նա երջանիկներից երջանիկն է այդ վայրում Յայց յանկարծ բանաստեղծը դնում է մեր առաջ մի երգ, որ լցւած է «ահազին տըլիրութեամբ», մրմիջւում է «աղեկտուր ձայնով» և «հուր հառաջանգով», իւր ամբողջութեամբ պարփակեալով «ահ գիշերւայ» պատկերում. Ու այդ երգը բանաստեղծն անւանում է «իմ երգը»:

Ինձ մի խոնդրիք, ևս չեմ երգի

Իմ տիգրութիւնն ահազին,

Աղեկտուր նրա ձայնից

Կը խորտակի քո հոգին . . .

Ո՞շ քեզ համար այսպիսի երգ

Երգելու չեմ ևս երբէք:

Եւ խելապէս, Յովին, Թումանեանն այդպիսի երգ ոչ երգել է, ոչ էլ ընդունակ է երդելու Դա նրա գեղեցկի այժերից վեր է՝ խորթինելով նրա տաղանդին Հայրենի եղերքի սահմաններում նա լաւատես է, խնդամիտ, և հաճոյք է զգում նրա արժէքների գերազանցութիւնը օրհներգելով մեշչանական արժէքների հանդէպ Յուստանութիւնը, առնջանքի ապրումները, «Եսի» սահմանափակումը, միայնութեան նւազները հանդէս են գալիս հէնց այնտեղ, ուր կտրւում է բանաստեղծը հայրենի եղերքից և անհարադատ ոլորտներ թեակոխում:

Անհարագատ ապրումների ծնունդ է նաև «Ժխուր գիշեր» ուսանաւորը. Մի տիգուր և արտում գիշեր բանաստեղծը սկսում է զրուցել իւր վշտի հետ, հարցուփորձով ուզում է իմանալ, թէ «որտեղից են իրար դտել».

—Ասան, իմ վիշտ, իմ սկ թախիծ,  
ԱՇ անրաժան կեանքիս ընկեր.  
Դու որ օրից կամ որտեղից,  
Ի՞նչ դէպքով ես ինձ հետ ընկել . . .

**Յովհ.** Թումանեանի տաղանդը չի ցուցադրում բնաւ և երրեք  
մի այդօրինակ «անբաժան» վշտի սոսկ գոյութիւնն անդամ իբրև  
զեղեցիկ: Ճիշտ է, այդ վիշտը կայ, ճնշում է նրան, տանջում է,  
զոյութիւն ունի «եսի» սահմանափակում, բայց և այնուէս այդ  
բոլորը հեռու են նրա տաղանդի կենարունաձիգ բովանդակութիւնը  
լինելու յաւակնութիւնից: Ամրոգջ ցաւն էլ նրա մէջ է, որ բանաս-  
տեղծը առօրէական իւր ապրումները համարում է իւր զեղեցիկ,  
իւր տաղանդի առանձնայատկութիւն: Հոգերանական այդ զգայա-  
խարութիւնը միայն թումանեանին չէ յատուկ, կան ուրիշ բա-  
նաստեղծներ են, որոնց համար շատ անդամ է մութ մնում իրենց  
գեղեցիկ էութիւնը, զրան սփափ վերապրել, օրինակ, Աւ. Խա-  
հակեանի մի շաբք սայթաքումները դէպի հայուկային աշխարհը  
և ընդգործմը թաթար ցեղի դէմ . . .

«Բմ երդի» և «Տխուր զիշերի» տանջալի ապրումներով բեռ-  
նաւորւած է զնում բանաստեղծը դէպի իւր հայրենի եղերքը: Այդ  
տեսակէտից շատ ճիշտ է բնորոշել նո իւր ոտանաւորներից մէկի  
բովանդակութիւնը՝ անւանելով «Նախորդաներ»: Հայրենի եղերքի  
խորհրդանիչն են ներկայացնում այդտեղ յիշատակուած Ալեսներք:  
Բանաստեղծը թոշում է նրանց մօտ «բախտից հալածւած», «կեանքի  
ախրութեան ամզերի տակից», բայց միաժամանակ «ողեարութեան  
հղօր թերով»:

Լեռներ, ներշնչւած դարձեալ ձեզանով,  
Թնդում է հաղիս աշխուժով լցւած  
Եւ ջերմ ըզձերս բախտից հալածւած,  
Զեղ մօտ են թոշում յախուսն երամով:

Այն շափով, որքան ճնշում է բանաստեղծին մնչանական  
առօրէականութիւնը, նա հալածւում է բախտից: Սակայն մինույն  
պահուն նո ոգեարութեան հզօր թիեր է առնում իւր հայրենի  
եղերքին փարելու համար, ընդդրկելու այլ համակիր «եսիր», ներ-  
քուստ լցւելու և վեհօրէն բարբառելու նպատակով, բնաւ անջատ-  
ւելով այն միջավայրից, որ նրան պատճառում է սոսկ տանջանք,  
չ'ծնելով կենասակինսդ և զւարթութիւն, սահմանափակելով նրա «եսը»  
անհամակիրների յրջապատռում:

Հետաքրքրական է նկատել մի հանգամանք, «Նախորդանքի»  
մէջ հայրենի եղերքի բնութիւնը խանդագառում է բանաստեղծին,  
ոգեարում է: Սակայն այդ նոյն զգացումները չին յուզում նրա

մէջ բնութեան երեսյթները հայրենի եզերքից դուրս։ Մի տեղ նրա սիրաք լցւում է բնութեան հանդէալ աշխուժով, ոգեսրութեամբ, իսկ մի ուրիշ տեղ այդ նոյն բնութիւնը շրիմ է յիշեցնում, կորած յոյսեր, կոկիծ, թուլութիւն և անզօրութիւն։ Ահա, թէ ինչ զգացումներ են յուզում «երկնքի աչքեր» ասազերը։

Ժպառում էք այսօր,  
Երբ թոյլ ու անզօր,  
Կորած յոյսերիս  
Կոկիծն եմ լալիս . . .  
Կժառապ նաև  
Շիրիմիս վերե . . .

Այստեղ բնութեան և մարդու հակադրութեան շեշտումը կայ։ Բնութիւնը պիտի մնայ յաւէրժօրէն, իսկ բանաստեղծը անէանալու է։ Մի իրողութիւն, որ այլ տեսակի գեղեցկի տաղանդով օժտւած երգիչների մօտ երգւում է, որպէս համայնապարփակ ցնորքի յոյզեր։ Բայց հայրենի եզերքում բանաստեղծը բնութեան հետ վէճ չունի, ցաւադինօրէն չի ապրում նրա յաւէրժութիւնն ու անմահութիւնը։ Հակառակը պիտի պնդել—նա մի համազրութիւն է կազմում ու երգում է իւր հաշառութեան նւազները։

Բնութիւնը մնում է, իսկ ինքը պիտի կորչի։ Այդ ապրումը յատուկ չէ բանաստեղծի հայրենի եզերքին, և մնիք տեսանք, որ «Դէպի անհունը» պօչում բնութեան հետ գրկախառնելու և միաձուլելու ներբուզն էր հնչչում։

Տեսանք նոյնպէս, որ բնութիւնն իւր ամբողջութեան մէջ աստածացնում էր բանաստեղծը զուտ պանթէխտական երանդով։ Բայց այդպէս չէ հոգեկան տանջանքի ու «եսի» սահմանափակման բնադրաւում։ Բանաստեղծն այդուեզ Աստծուն երկնքում է վնտրում։ Աւելի հետաքրքրական է այն հարցումն, որ անում է բանաստեղծը—«ուր է Աստւած»։

Նա ուզում է կայծակ լինել, որոտ-ճայթիւնով պատաել մայլ ամպերի շարքերը, ցոյց տալ մարդուն վերին դադանիքը։

Որ տեսնէ այնտեղ  
Ի՞նչ բան կայ ահեղ,  
Կամ ով է նըստած  
Եւ ուր է Աստւած . . .

Շատ հետաքրքրական հարցում, որոնումների Աւելի ևս հետաքրքրական են այդ հարցման և որոնումների հոգերանական դրդապատճառները։ Բանաստեղծն Աստւած է որոնում այն պահուն, երբ զուրկ է իւր հայրենի եզերքից և զգո՞ն երկրի մէջ ապրելոց՝ համակւած յունահուսական ապրումներով, հեռու ներքին, հոգեկան

հարմօնիայից։ Այդ Աստծուն որոնելու կարիք չի պղում, երբ ապրում է համակիրների շրջապատռմ, ներշնչւած լաւատևութեամբ և սեպհական խմբակցութեան մէջ մարմնացնելով իւր կատարելութեան ծարաւի ձգտումներն ու իդէալները, օժտւած ներքին ներդաշնակութեամբ։ Այստեղ սէրը, որպէս այդպիսին, նրան կապում է անհունութեան և յաւէրժութեան հետ, նա ընդդրկում է մի ամբողջ կոլլեկտիւ, նրա երազանքներով, ցնորքներով ու կատարելութեան թոփքներով հանդերձ՝ միշտ մնալով երկրայինի սահմաններում, բնաւ կարիք չզգալով ամպերից այն կողմբ թափանցելու և գերերկրային կատարելատիպ որոնելու։ Դա սրբագործւած մի բնադրաւու է, որ չնշում է անմահութիւն՝ վանելով մահւան երկիւզն ու հիասթափութիւնը։

Այստեղ, մեր հոգու սուրբ հայրենիքում,  
Խաղաղ օրերի պայծառ լուսի տակ  
Ապրում է սէրը, ժպիտը ծաղկում,  
Ուրախ երգերը թնդում ներդաշնակ . . .

Սակայն մեշչանական առօրէականութեան բովարանում դեղերող բանաստեղծը զգում է, որ իւր այդ հայրենի եղերքը հեռու է. դա անցեալի գրկումն է թաղւած կամ փափազելի ապադայի հեռանկարն է՝ մեշչանականի փլատակների վրայ։

Այդ մեշչանական աշխարհում բանաստեղծին չի փարում սիրոյ շունչը և նա որմնում է անդրշիրմային Աստծուն, զրկւած զգալով իրեն այն կապից, որ մարդուն օղակում է անմահութեան և յաւէրժութեան հետ անմահութեան միջոցով։ Բանաստեղծի սիրութ հայրենի եղերքին զեղուն է սիրով, նրանից գուրս, մեշչանական առօրէականութեան սահմանում թափուր է սիրուց։

Ո՞հ, չէ, սիրուն, էլ ոչ մի սէր  
Ճար չի անիլ իմ սրտին,  
Դուք էլ, անուշ ար և ձորեր,  
Զէք զիմանալ էս զարդին։

Բանաստեղծը գո՞ւ չէ իւր այդ սիրագութել վիճակից, նա զգում է սիրոյ կարօտը և այնքան գունագեղ երդել զիտէ սիրոյ ամօքիչ ոյժը։ Տայց ում սիրել. մեշչանական հասարակարդի մէջ սէրն ևս փոխանակութեան արժէք է, առ ու ծախսի առարկայ, կեղծւում է այնպէս, ինչպէս իւրաքանչիւր սպառզական ապրանք։ Նա չի հաւատում ժպտուն աշքերին, որոնք ծաղիկների պէս վառւում են կորսարի անդունդը քարշելու համար հանապետական կենսահայեցողութեամբ սնւած «միամիտ մարդկանց»։

Ահա պօչան էլ, պատրանքով հարրած,  
Գերւեց մի անդամ ժպտուն աշքերի,

Ու որքան տանջւեց, տառապեց խարուած,  
Ու որքան սրտում գտնդատների ունի . . .

Դժւար չէ այդ բալոր տառապանքների վախճանական պատճառը զտնել:

Ընդհանուր պատճառն արդէն մեզ յայտնի է, ու բանաստեղծի կտրւած լինելն է իւր հայրենի եղերքից, մեշշանական ատելի շրջապատի մէջ ապրելու ծանր հարկադրանքը, որ գոյացնում է նրա հոգու մէջ տանջանք, «եսի» ահմանափակում, որովհետև նա մերժում է այդ միջավայրի բալոր արժէքները, նրա փողի պաշտամունքը, սիրոյ առուտուքը և այլն:

Բայց այդ բալորը պայմանաւորւած է նաև մի հոգեբանական կարեւոր գրութեամբ, որի մասին անհրաժեշտ է առանձնապէս շեշտել:

Հայրենի եղերքին բանաստեղծը անձնական երջանկութիւն է որոնում համայնօտեն, Նա ստեղծագործում է բոլորի հետ և բոլորի համար Նրա կատարելութեան ձգտումները մինոյն ժամանակ մարմնացած են ամրողի մէջ, կօլլեկտիւ, հանրական շրջապատում: Նա ընդդրկում է մի հանրական խմբակցութեան կեանքը, իւր հոգու մէջ արձագանք ունի ամէն մէկը, որ հարազատ է, համակիր և ընկեր: Բանաստեղծը կարւած չէ կեանքից, այլ կազմում է այդ կեանքի մի անբաժանելի մասնիկը: Նրա կենսահայեցողութեան մէջ ինքը և իւր խմբակցութիւնը մի են, իրար հասկացող, իրարով չնչող և ապրող:

Այդ օրինակ կենսազգացութիւն և աշխարհիմացութիւն չունի նա մեշշանական միջավայրի սահմանում: Բանաստեղծն այդտեղ անձնական երջանկութիւն է որոնում միայնօտեն: Նա ստեղծագործում է ինքն իր հետ և իրեն համար Նրա կատարելութեան ձգտումները երկրամերժ յատկութիւն ունին, մարմնացած են դերքնաւեան ոլորտներում, հեռու մի ամրողի, մի կօլլեկտիւ համայնապարփակ շրջապատից: Նա այդտեղ ընդդրկում է միայն և եթ իւր սեպհական կեանքը, իւր հոգու մէջ ոչ ոք արձագանք չունի, ոչ մի հարազատ, համակիր կամ ընկեր չի փարում նրան: Մի խօսքով՝ Նա կտրւած է կեանքի բոլոր կատերից, տարապրւած է հանրական կենցազի ողեշունչ խանդավառութիւնից: Նա կեանքի մի անբաժանելի մասնիկը չի կազմում, չի ստեղծագործում ընդհանուրի համար, չի ընդդրկում այդ ընդհանուրին: Նրա կենսահայեցողութեան մէջ ինքը զգում է իրեն անջատւած տիրող շրջապատից, խորթ նրան, ոչ ոք չի հասկանում իրեն, իրարով չնչելու, ապրելու և իրար հասկանալու հաճոցը: Ու բաւականութիւնը նու չի վայելում:

Տքնեցի, ինչպէս բու աւերակում,

Ինչպէս միայնակ ճնճղուկ տանիքում . . .

Առաջանական մարդու համար փրկութիւնը հաստան, Միթէ չը հասաւ. ժամը փրկութեան

Մենակ մարդու համար փրկութիւնը չկայ, — ահա այն խիստ ու դաժան ճշմարտութիւնը, որ խորապէս ապրում է բանաստեղծի հոգին:

Առձնական երջանկութիւնը համայնօրէն է ձեռք բերում, երբ մեկդի է նետուում «եսի» սահմանափակումն իւր ներքին ինքնայօշտումներով և ընդդրկեում մի հանրական ամրողութիւն, որի մէջ մարդուանում է անձնական կատարելութեան վսեմ իդէսլները: Ամեն մի ստեղծագործութիւն իւր անունով քաղում է հաւաքականութիւնից, եթէ բացակայում է վերջինս, ստեղծագործութիւնը դառնում է անբովանդակ և յօրինում է խարուսիկ միրաժներ, որոնք յարատու չեն, ոդեռում են առժամապէս:

Հաւաքականութիւնից կարւելը միննոյն ժամանակ առաջ է բերում ներքին տանջանք: Չէ որ մարզս հասարակական կենդանի է, ինչպէս որ պնդել է հասդարեան փիլիսոփան: Հասարակական կենդանին չընդդրկելով ոչինչ իրենից դուրս՝ սահմանափակում է իւր «եսը», խորառութեամ ինքն իւր մէջ և բարոյական ինքնասպանութիւն գործում: Ճիշտ է, ստեղծագործելու համար անհրաժեշտ է կարւել առօրէականութիւնից, բարձրանալ տեսալ մօմէնտների նեղ ապրումներից, բայց դա, ի հարկէ, «միայնակ ճնճղուկի» վիճակ չէ ստեղծում, ինչպէս տեսել ենք գեղեցկի և տաղանդի հոգերաւութիւնը վերլուծելիս:

Միայնօրէն փրկութիւն որոնելով և չդանելով, բանաստեղծը զժպոհում է ինքն իրենից, տանջւում է ներքուստ և տանջում ուրիշներին, որոնց հոգին խորթ է իրեն:

Հէնց այդ միայնօրէն փրկութիւն վնարելուց ծագում է «եսի» սահմանափակումը, յոունտեսութիւն կենսահյեցողութեան մէջ, մի խոռոքի հոգեկան տանջանք իւր բոլոր պատկանելիքներով:

Ինքն իրենից զժպոհ լինելով նա զժպոհ է միննոյն ժամանակ և մեջչանական միջավայրից, որ նրան բաժանում է իւր հայրենի միջավայրից: Այս վերջին տեսակի ապրումները բանաստեղծը պատկերացրել է իւր «Տրտունջ» ուսանաւորում: Կարւած իւր հայրենի եղերքից՝ բանաստեղծը մի խղճալի դոյտութիւն է բարչ տալիս, զգալով որ իւր կեանքի օրեւը անդանալիօրէն անցնում են անպառագ, տիսուր և ձանձրաղի: Նա տրանջում է իւր վիճակից, միննոյն ձամանակ համոզւած է խորապէս, որ իւր այդ տրտունջը դատարկ, ունայն բան է, զժւար է խթանի դէմ աքացել, կեանքի բոլոր անկիւններում տիրականօրէն իշխում են մեջչանական արժէքները և բանաստեղծի ձայնը հնչում է, որպէս «ձայն բարբառոյ յանապատի»: Նա հեռու է հայրենի եղերքից, ամեն ինչ թողել է անցեալի բաժ-

նում, թէ սիրած մարդկանց, թէ իւր լաւ յոյսերը, որոնց գերեզմանների շարքերի միջով է ընթանում. մեջանական հասարակարգը կառուցել է իւր չենքը նրանց աւերակների վրայ: Թաղել է նրանց: Ու բանաստեղծի տուաջ բացւել է տխուր ճանապարհ: Իւր հայրենի եղբքը, նահապետական կարգ ու սարքը տեղի են տւել նոր պայմանների, նոր մարդկանց, նոր արժէքների առաջ, որ օտար են իրան: Ինքն ևս օտար է, խորթ է նրանց, զգում է մենակութիւն, իւր անցաւոր լինելն այդ բոլորի միջն տեղ չունի, կայան չունի, զուրկ է դադարից ու հանգստից: Հոգու բարեկամներ, համակիրների շրջան, մաերիմների թարմաշունչ մթնոլորդ—այդ բոլորը բացակայում են: Նրա շուրջը քարսիրտ անտարբերութիւնն է իշխում: Օտար են բոլորն էլ, ոչ ոք չի հասկանում բանաստեղծի վիշտը, նրա լեզուն ու ապրումները: Բանաստեղծն ատում է այդ բոլորին: Նրանց իդէալները տխուր և ձանձրալի են, չեն օգնորում, չեն յուզում: Փող, ասուտուր ամենատեսակ սրբութիւններով, գծիութիւն: Միթէ կարելի է սիրել նրանց, աւելի լաւ է մենակ մնալ և տսնջւել ձանձրոյթից և տխրութիւնից, քան ընկերանալ այդ հոգով ազքաներին, որոնք մեզնում են ամեն ինչ: և բարձր ձգտումներ, և սրտի վեհ յուզումներ.

Չնչին մարդուկներ, լրբօրէն հանդիսատ,  
Անսիրտ, փոքրողի, գծիութիւն: Կոպիտ.  
Մեանում են մարդում նրանց հայեացքից  
Եւ հոգու ձգտում, և սրտի ժպիտ:

Էլ ում առաջին սիրտդ բաց անես,  
Ո՞ւմ համար երդես սրտալի երդեր,  
Ո՞ր չքին սիրես, կեանքդ նւիրես,  
Էլ ինչպէս ապրես անսէր, անընկեր . . .

Ամբողջ ողբերգութիւնն էլ զրա մէջ է, բանաստեղծը մեջանական շրջապատում իրեն զգում է բացարձակապէս մնանակ ու տանջում է հոգեպէս՝ անկարող ելք փնտրելու: «Էլ ինչպէս ապրես անսէր, անընկեր»: Ներքուստ բգրտած, կորցրած ներդաշնակութիւնն ու ամբողջականութիւնը՝ նա տենչում է իւր հայրենի եղբքը, որ պիտի ըերի հոգու հարմօնիա, ներքին ամբողջականութիւն՝ աղատելով սրտի և մտքի երկպառակութիւնից: Մեջանական միջավայրի մէջ սրտի հարմօնիա չկայ, ամբողջական բնաւորութիւններ, սիրելու և ատելու մէջ հետեւղականօրէն աննկուն և աննահանջ սրտեր գոյութիւն չունին: Անսիրտ են, փոքրողի, գծիութիւն և կոպիտ, ինչպէս որակում է բանաստեղծը:

Բայց այդ չնչին մարդուկները, որ լրբօրէն հանդիսատ են, ունին և զիշատիչ հակումներ: «Ամարդը մարդուն գայլ» սկզբունքն է

նրանց առաջնորդը։ Ու հոգով խաղաղօրէն դաւանում են, պաշտամունքի առարկայ դարձնում «մարդը ժպտերես մարդ զիշատելու գործնական քաղաքականութիւնը Բռնի գործակցութեան սիստեմը\*») մասնաւոր սեպհականութեան վրայ յենւած բարոյահայեցողութիւնը դգւանք է յարուցանում բանաստեղծի հոգու մէջ։

«Կանչ» ստանաւորը այդ զգւանքի արտայայտութիւնն է։

Նահապետական «հոգու պարզութեան» մի հառաջանք է այդ ստանաւորը Ընդդէմ այն բոլորի, ինչ որ բանաստեղծի կենուահայեցողութեամբ՝ վարակւած է մեշշանական բարոյահայեցողութեամբ և իրաւահայեցողութեամբ։ Իւր հայրենի եղերքի «անմեղութեան» ճիշն է դա ընդդէմ անբարիշաների, որոնք տարածում են արտասուք ու լաց, հեծեանք ու անէծք, չար նախանձի մահացու թոյնով ապականելով ամեն ինչ բանաստեղծին ներքուստ այրում է հոգու պարզութեան և անմեղութեան այդ վտարումը տիրող կեանքի կողմից։ Նա տանջւում է, որ այդ կեանքը ստեղծում է «անսպաս տանջանքի հանդէս», աւելի ոյժ տալով մարդկանց ամբարտաւան կրքերին, որոնք մեղմանալ չդիտեն, այլ անդորր կենցաղը ցրում են սրածութեան ահարկու գոշիւններով։ Կենուական աններդաշնակութիւններն ու ներքին հակասութիւնները, որ յօրինել է մեշշանակուն աշխարհը, վերջ չունին, բանաստեղծն ուրիշ փրկութեան միջոց չդիտէ, բայց միայն այն, որ կոչ է անում, կանչում է Ասածուն, որ նա սպատմի չարերին, կեանքը դժոխք դարձնող շահագործողներին։ Նահապետական աշխարհի քայլայման անխուսափելիութեան ենրակորուստը խափանելու անձարակութեան մորմոքն է դա, ուզգւած գերբնական կալիբր Միթէ այդ գմոխքը, որ ինքնին մեշշանական հասարակարգն է, ի ընէ է այդպէս, Աստուած է այդ ստեղծել։ Եթէ ոչ, ապա ինչու է նա իւր գոյութիւնը շարունակում, չը որ մարդու ձեռքով չինւածը, կարող է կործանել նոյն մարդու ձեռքով։ Այդ բոլորն Աստուած գիտէ։

Թէ ուռ չը զիտես։

Որ այստեղ, երկրում

Մարդը ժպտերես

Մարդ է զիշատում . . .

«Կանչ» հետաքրքրական է և մի այլ տեսակէտից։ Աչքի առաջ ունինք զեղարւեստական ստեղծագործութեան ինդիբներից մէկը։ Մեր կարծիքով զեղարւեստական ստեղծագործութիւնն անկախ ապրումների մեթօգն ունի կեանքի տւեալները կազմակերպելու գործում։ Գեղադէտին խորթ են կուի ապրումները, որոնք կազ-

\* ) Այդ սիստեմի մանրամասն վերլուծութիւնը տեսնել մեր «Նիրվանգադէ»։ Ինչ ընտանիքի եւ ինտելիգենտի վիպասանը» գրքովի «Բռնի գործակցութիւն» զիմում։

մում ևն հրապարակախօսական ստեղծագործութեան առանցքը: Ես չի կանչւած պաքքարի համար, ինչպէս հրապարակախօսը, այլ սեպ-հական խմբակցութեան կեանքի անդորր հայեցողութեան, հրճւանքի համար: Ես խաղաղութեան առաքեալ է, նա ատում է, զգում հա-կառակ, ներհակ խմբակցութեան կեանքից, բայց նրա դէմ պայքա-րի շփոր չէ հնչեցնում, այլ կոչ է անում խաղաղութեան Աստծուն.

Մեղմացրու մարդկանց

Կիրքն ամբարտաւան,

Եթէ Աստուած ես

Դու խաղաղութեան:

Հրապարակախօսի համար այդ դիմումը նշան է օգու թուլու-թեան, մեղկութեան և երկչուառութեան. փոխանակ ուազմի և բնրու-տացումների, նա պիտի կարդայ այդ տողների տակ գեղագէտի խաղաղասոյր նււայները, ու պիտի ասի դժկամակութեամբ՝ «բառեր, բառեր, բառեր», որով չեն վառում «դէնքի քննադատութեան» համար, այլ նւազուն պատկերացման և թովչական յուզման են պրամադրում:

Բանաստեղծը համակ սէր է, զթութիւն և լաւակամութիւն խրայինների համար: Խաղազ և անդորր բարդաւանում սեպհական խմբակցութեան համար—ահա նրա աղօթքի նիւթը և սնեսեալ գաղափարն ու ցանկութիւնը նրա ստեղծագործութիւնը չունի այլ պրիօններ: Բայց յանկարծ ատելի միջավայրը ցցում է նրա հանդէպ իւր զգելի մարդկանցով և արժէքներով: Ի՞նչ է մնում անել. կոչ առ խաղաղութեան Աստուած և զգայրացած երդի վրէժք... պատկերացումով—փողի քսակի երդիծանք, յուսահա-տութեան թախծ ալի երգ.

Յուսահատութեան թախծալի երգով

Լեղի կը զարձնեմ ձեր կեանքը բոլոր

Եւ դուք կարտասւէք լիացած աչքով,

Խնջոյքների մէջ նստած զլխակոր...

Հրապարակախօսը, հաւատարիմ իւր կուի ապրումների մե-թօդին, կծիծագէր սրտանց այսօրինակ «վրէժի» վրայ: Ո՞ւմ ի՞նչ կարող ես անել յուսահատութեան երդով, այն էլ թախծալի երգով: Պատերազմողներին յոյս է հարկաւոր ներշնչել գալոց յաղթանակի համար, և վայ այն զօրավարին, որ ուզում է մարտիկներին խրա-խուսել «յուսահատութեան թախծալի երգով»...

Միայն հոդով բանաստեղծը կարող էր թարգմանել սիրուն «Հայաւաթի երդի» հետեւալ տողերը.

Յոդնել եմ ես ձեր վէճերից,

Չեր արխնոտ կախներից,

Յոդնել եմ ձեր՝ սպանութեան

Ու վրէժի աղօթքներից  
 Զեր ոյժն ամբողջ օփոյ մէջ է,  
 Զեր կորուսը կոփւներին  
 Արդ ապրեցէք այսուհետք  
 Խաղաղ, սիրով, ևզօր նման . . .  
 Մտէք այժմ էս զետի մէջ  
 Ու լւացէք ձեր դէմքերից  
 Կուփ վայրի նկարները  
 Ու արիւնը ձեր մատներին  
 Թաղէք հոգում ձեր զէնքերը,  
 Առէք կորմիր քարը հանքից  
 Ու շինեցէք կարմիր քարից  
 Խաղաղութեան շիրխի զլուխ.  
 Եղէդն առէք եղէդնուտից  
 Զարդարեցէք փետուրներով,  
 Ու ծխեցէք ի միասին  
 Խաղաղութեան չիրուխները . . .

Այս երկար հասւածը մէջ բերինք կրկնակի նպատակով՝ Նախացոյց տալու գեղարւստական ստեղծագործութեան բնորոշ կողմերից մէկը, երկրորդ՝ թէ որքան անյարմար միջավայրի մէջ է զում իրեն մեր բանաստեղծը՝ Նա արդէն իւր ինքնուրոյն երգի մէջ ասել էր մեջանական աշխարհին, թէ զիշ առիջների որջ է ներկայացնում։ Թարգմանական առօղերի մէջ ևս նոյնն է ասում ըստ էռութեան— յօդնել ևմ ձեր գիշատօւմներից . . .

Մենք զիտենք արդէն, թէ ինչպիսի երկեր է թարգմանում Յովին. Թումանեանը, որքան հարազատ են իրեն Լօնդֆելլօյի ապրումները, որոնց հաւատարիմ արտայայտիչն է դարձել՝ ունենալով յար և նման ապրումներ իւր հոգու մէջ։

Այս բոլորից յետոյ մեղ թւում է թէ պարզ է բանաստեղծի հոգեկան տանջանքի և «եսի սահմանափակման» հիմնական պատճառը։

Միենոյն ժամանակ պարզ է, թէ ինչո՞ւ նա իրեն համարում է պանդուխտ երկրի մէջ, տարագիր, կտրւած կեանքի բոլոր կապերից, որպիսի ապրումների վերլուծումը տիբինք այս զրւածքի սկզբում։

ԱՌԻ, ևս բնաւեր, ընկած սարէ սար,  
 Ու քաշ եմ զալի. ու քաշ եմ զալի  
 Երկնքի թռչող հաւքին հաւասար,  
 Անշունչ քարին էլ երնէկ եմ տալի,  
 Ամեն քար, Աստւած, իւր տեղն է անժամ,  
 Հէնց ես եմ մնակ անդից զլորւել.  
 Ամեն հաւք, անդութ, իր բունը կերթայ,  
 Հէնց ես եմ զարիք, ճամբում մոլորւել . . .

Այս զգացումներով յորդ քառեակները բանաստեղծը դրել է «գաղթականի երգը» վերնագրի տակ: Վերնագիրը մեզ չպիտի շփոթեցնի. բանաստեղծը մի անգամ արդէն ասել է իրեն համար բնորոշ մի խօսք. «Պախտուխս եմ, քոյրիկ»: Դա իւր սեպհական ապրումների հարազատ արտայայտութիւնն է, որ համապատասխանել է հայրենազուրկ գաղթականի մորմոքներին: Բանաստեղծն ևս կարւած է իւր հայրենի եղերքից, զանուում է մեշչանական տարտարոսի մէջ, որ նա անւանում է «քափուր աշխարհք», «անձանօթ ճամբայց»: Նրա ոտքերն ևս յոգնած են, ինչպէս պնդել է «Պանդուխս եմ, քոյրիկ» ոտանաւորի մէջ և կրկնել է «գաղթականի երգում»:

Ամենայն իրաւունքով, ուրեմն, այստեղ արտայայտւած զգացումները մենք կարող ենք վերազրել բանաստեղծին՝ համարելով նրա անհատական ապրումների ծնունդ:

Այս, էս ու ճամբէն, էս դժար ճամբէն  
Եարաբ ուր կերթայ, եարաբ շատ մնաց.  
Որտեղ կը հատնի էս օրը եաման,  
Որտեղ կհանդչեն ուներըս յոգնած . . .

Ոտներն յոգնած են, իսկ հոգին տանջւած: Ու այդ բոլորն արդիւնք «եսի սահմանափակման»:

Ուր գնալ: Հարազատ, համակիր հոգիների կարիք է զգում բանաստեղծը: Նա բանաստեղծ է և պէտք է ընդգրկի իւր հոգուն համապատասխանող անձերին, նրանց արտայայտիչն ու կատարելատիպը լինի: Բայց նրանք չկան մեշչանական միջավայրում, ուր «լիրը և անամօթ» մարդիկ ունահարում են ամեն սրբութիւն՝ զոհ բերելով նրանց՝ Մամօնային և Մօլոխին:

Եւ տեսաւ Մովսէս լերան բարձունքից,  
Ժողովուրդն այստեղ ներքե, հովիտում  
Աստւած է շինել ուկուց, արծաթից . . .

Եւ սուրբ Սինայի մաայլ ամպերում  
Կանզնեց մարզարէն, նայեց գէպի վեր,  
«Միթէ այս ամրախն իմ եղբայրն է, Տէր» . . .

Մեշչանական ամրոխը Յովհ. Թումանեանի եղբայրը չէ և չի կարող լինել: Այդ ամրոխը իւր նիստ ու կացով, իւր հոգեկան և բարոյական էութեամբ լոկ տանջում է նրան, սահմանափակում, զրկում ներքին հարմօնիքայից և ինքնալրացումից, հոգու խաղաղութիւնից և երջանկութիւնից: Այդօրինակ հոգեկան տանջանքն ու «եսի սահմանափակումը» բանաստեղծին մղում են դէպի իւր հայրենի եղերքը, ուր ձեռք պիտի բերի հոգու խաղաղութիւն և ինքնալրացում . . .

(շարունակելի)



Ա. Տէրենեան.